

## Մամլոյ հաղորդագրութիւն

Որոշ ժամանակ է ի վեր, ժողովուրդի պաշտպանութեան միաւորները կը շարունակեն կատաղի պատերազմներ «Տահէշ»-ի, «Նուսար» ճակատի և այլ ահաբեկչական խմբակցութիւններու դէմ, պաշտպանելու մեր ժողովուրդին կարգ մը շրջաններու մէջ Սուրիոյ հիւսիսը և հիւսիս-արեւելքը, ի մասնաւորապէս Հասիշէի մէջ: Անոնք կարողացան պարտութեան մատնել «Մալաֆի» ահաբեկչական և ծայրայեղական ուժերը աւելի քան մէկ վարի մէջ, որպէսզի վայելէ մեր ժողովուրդը ետքը անվտանգութիւն և ապահովութիւն: Թէլ Պրաքի պատերազմը վկայ էր ժողովուրդի պաշտպանութեան միաւորներու դերը վտարելու ահաբեկչական ուժերը այդ տեղէն, և անոնք քաշուեցան ետքը աւանէն թողելով անոր ժողովուրդին իրենց կեանքն ու ապահովութեան կառավարութիւնը, ըստ իրենց ազատ կամքին, խոստանալով միեւնոյն ժամանակ իրենց պաշտպանութիւնը եթէ ենթարկուին կրկին յարձակումներու ծայրայեղական խաւար ուժերէն

\*\*\*\*\*

Այս դժուար պայմաններուն ուր կը բացակայի պետութիւնը, կը գնահատեն ժողովուրդի պաշտպանութեան միաւորները, որոնք կը պաշտպանեն հասարակութիւնը և ազատութիւնը, ծայրայեղականութեան և ահաբեկչութեան ուժերուն դէմ

\*\*\*\*\*

Ազգային Համակարգող Մարմնի տեղեկատուական գրասենեակի նախագահ,  
06/03/2014